community

The New Apostolic Church around the world

02/2016/AM

Հաղթել Քրիստոսով՝

աստվածավախություն և վստահություն

Ժամերգություն Բրազիլիայում՝ Հավատը խոստովանել

Դավանաբանությունից՝ Եկեղեցական խորհուրդներ

Հարցեր և պատասխաններ՝ Կյանքը մահից հետո

New Apostolic Church
International

Աստվածավախություն և վստահություն

Միջազգային ՆԱԵ

Սիրելի եղբայրներ և քույրեր,

2016-ը կրում էր << Հաղթել Քրիստոսով>> նշանաբանը: Դա հավանաբար առաջին հերթին վերաբերում է նաև մեր առօրյա կյանքին: Նման նախադասությունը բովանդակում է բազմաթիվ ասպեկտներ, ես կցանկանայի առանձնացնել գլխավորը՝ Քրիստոսով հաղթանակին են պատկանում աստվածավախությունն ու վստահությունը: Աստվածավախությունը հարգանք է, ակնածանք Աստծո նկատմամբ, ով մեր արարիչն ու երկնային հայրն է: Նրան պետք է մենք ամբողջ կյանքում վստահենք, նաև՝ մեր ծանր օրերին:

Այս առումով՝ մի քանի օրինակներ Սուրբ գրքից.

- Հովսեփը կարողացավ աստվածավախության շնորհիվ մեղքը հաղթահարել:: Ոպես հնազանդ մարդ նա գիտակցում էր, որ Աստված տեսնում է իրեն և իր հետ է: Նա ընդդիմացավ փորձությանը, չենթարկվեց օտար կնոջ սանձարձակությանը և ճսաց բանտում՝ բոլորի կողմից մոռացված, Աստծուն հավատարիմ: Վերջապես եկավ պահը, երբ Աստված նրան ազատեց:

  Այսօր էլ մենք գիտենք, որ Աստված ամեն ինչ տեսնում է և գիտի: Եկեք վանենք մեղքը, վստահենք նրան: Նա մեզ երբեք չի մոռանա:

- Մովսեսը մի մարդ էր, ով լիովին վստահում էր Աստծո գործերին: Նա պայքար էր մղում փարավոնի դեմ, որն սկզբում անհույս էր թվում: Այնուամենայնիվ, Մովսեսը չէր դադարում վստահել Աստծուն, անգամ, երբ եգիպտական թագավորը ինն անգամ մերժեց թույլ տալ Իսրայելի ժողովրդին տեղափոխվելու: Վերջապես Մովսեսը հրաման տվեց նախապատրաստվել երկրից դուրս գալու համար. Բոլորը հնազանդվեցին նրան, և Աստված ազատեց նրանց:.

  Իսկ այսօ±ր: Ինչքան հաճախ ենք մենք իրավունք ունեցել ապրելու Աստծո ուժը: Չնայած չարի բոլոր փորձություններին՝ մենք պետք է Աստծուն վստահենք և նրան հնազանդվենք: Հետո մենք վերջնականապես կմերժենք չարը:

- Պողոսը պետք է լիովին փոխվեր: Այն ամենը, ինչը նրան սկզբում սուրբ էր թվում, հանկարծ դառնում է վիճարկելի և անկարևոր: Նա հավատում էր Աստծուն և վստահում, և շուտով շարունակեց իր ուղին որպես Աստծո գործիք և առաջնորդեց Տիրոջ համայնքը դեպի փրկություն: Աստծո Որդին ինքն էր նրան ուղարկել որպես առաքյալ և ողջ աշխարհում Ավետարանը տարածող:

  Այսպես է այսօր նաև մեր պարագայում: Աստված ուղարկում է մեզ ամբողջ աշխարհով մեկ, որպեսզի հաստատենք Հիսուսի հարության մասին ուրախ լուրը, նրա համբարձումն ու գալուստը և բարձրաձայն պատմենք դրանց մասին: Քրիստոսը գալու է , նա դա խոստացել է:

Մենք ուզում ենք Աստծուն ակնածանքով հնազանդվել, կյանքի բոլոր իրավիճակներում, միշտ, ամբողջ կյանքում: Մենք գիտենք, որ նա ամեն ինչ տեսնում է ու գիտի: Մենք կարող ենք վստահել նրա իշխանությանը : Ապա և կապրենք հաղթանակը Քրիստոսով:

Սրտանց ողջունում եմ աշխարհի բոլոր առաքյալների հետ միասին:

Չնայած փորձությանը՝ մենք խոստովանում ենք մեր հավատը

Լուսանկարում՝ Բրազիլիայի ՆՄԵ

710 մ բարձրություն ունի այն լեռը, որի վրա Քրիստո Ռեդենթորը կանգնեցրել է Քրիստոսի արձանը և Ռիո դե Ժանեյրոյի վրա մի լավ հայացքի հնարավորություն ստեղծել: 2015-ի հոկտեմբերի 28-ի ժամերգությունը գլխավոր առաքյալ Շնայդերը տոնեց բրազիլական մեգապոլիսում:

1. Կորնթացիներին 16,9

<< Քանի որ ինձ համար աշխատանքի մեծ և կարևոր դուռ է բացված, իսկ հակառակորդները շատ են>>:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այսօրվա խոսքը Պողոսը գրել է կորնթացիներին; Նա խոսում է իր առաջիկա գործունեության մասին: Նա ճանապարհորդում էր և կանգ է առնում Եփեսոսում: նա այնտեղ որոշում է, որ պետք է մի համայնք հիմնել: Հետո նա գրում է կորնթացիներին. << Ես հիմա Եփեսոսում եմ և այն զգացումս ունեմ, որ այստեղ հրաշալի հնարավորություն է տրված գործելու, թեև շատ հակառակորդներ կան այստեղ>>: Անցած օրերի ընթացքում մտածել եմ այդ մասին և շատ հետաքրքիր համարել, ուզեցել եմ դրա մասին ավելին իմանալ: Պատմությունը, թե ինչպես է նա այնտեղ համայք հիմնել, գտնում ենք Աստվածաշնչում և այն էլ Գործք առաքելոցի 19-րդ և 20 րդ գլուխներում: Երբ ես դա կարդացի, մտածեցի ձեր մասին, իմ եղբայրներ և քույրեր այստեղ՝ Բրազիլիայում, քանի որ այստեղ նույն իրավիճակն է: Ես մտածեցի, որ սա գեղեցիկ խոսք կլիներ չորեքշաբթի այս երեկոյի համար:.

Մի պահ նայենք. Պողոսը եկավ Եփեսոս, որպեսզի այնտեղ եկեղեցի հիմնի: Նա իր հավատը ճանաչել տվեց և մարդկանց քարոզեց ուրախ լուրը: Եփոսոսը մի մեծ քաղաք էր, այդ ժամանակների ամենամեծ քաղաքներից մեկը: Այնտեղ կար ավելի քան 100.000 բնակիչ, և միայն 12 մարդ ընդունեց նրա վկայությունը, ոչ թե հարյուր, ոչ թե հիսուն, այլ միայն տասներկու / Գործք 19,7 / : Այնուամենայնիվ, Պողոսն այստեղ տեսավ գործելու մի արտակարգ հնարավորություն: Նա չհիասթափվեց, այլ մտածեց. << Եթե Աստված ինձ արդեն այստեղ է ուղարկել, ես պետք է այստեղ ինչ որ բան անեմ>>: Բայց նա շատ հակառակորդներ ուներ:

Մենք արտակարգ հնարավորություն ունենք Տիրոջ գործի համար ինչ որ բան անելու: Դա պետք է արվի ամբողջ աշխարհում ամենուր:

Նախ նա հրեաների մոտ գնաց: Այնտեղ հրեաների մի հավատարիմ խումբ կար, և նա նրանց հետ խոսեց Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու և որպես Քրիստոսի առաքյալի՝ իր միսիայի մասին: Սուրբ գրքում բոլոր դեպքերում կարդում ենք, որ ոմանք << խստասիրտ էին մնում և ընդդիմանում>> / Գործք 19,9/: Նրանք կառչած էին իրենց ավանդույթներին և այն լուրը, որ Հիսուսը Աստծո Որդին է, իսկ Պողոսն էլ Քրիստոսի առաքյալը, չէին ընդունում: Ես գիտեմ, որ Աստծո զավակների շարքը այստեղ՝ Բրազիլիայում երկրի և այս քաղաքի բնակիչների թվի հետ համեմատած՝ փոքր է: Դուք ձգտում եք ձեր հավատը տարածել, բայց շատ հավատարիմ քրիստոնաներ չեն ընդունում այս նոր լուրը: Նրանք կառչած են մնում իրենց հավատին և ավանդույթներին: Երբ դուք նրանց ասում եք, որ մենք կենդանի առաքյալներ ունենք և, որ Հիսուսը կրկին գալու է, և նա անդրշիրմյան աշխարհի հոգիներին փրկություն է առաջարկում, նրանք ասում են. << Ոչ, դա մեզ և մեր ավանդույթներին օտար է: Դա խորթ է մեզ համար: Մենք չենք կարող դրան հավատալ: Մենք մնում ենքմեր հավատքին հավատարիմ>>: Ես կարծում եմ, որ իմաստ չունի պնդելու: Դուք դա ավելի լավ գիտեք, քան՝ ես: Նրանք կառչած են իրենց հավատին, և այսպիսի տեսակետով ենք տանում մեր պայքարը: Պողոսի առաջին խնդիրն այն էր, որ միայն քչերն ընդունեցին նոր լուրը:

Նախ նա հրեաների մոտ գնաց: Այնտեղ հրեաների մի հավատարիմ խումբ կար, և նա նրանց հետ խոսեց Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու և որպես Քրիստոսի առաքյալի՝ իր միսիայի մասին: Սուրբ գրքում բոլոր դեպքերում կարդում ենք, որ ոմանք << խստասիրտ էին մնում և ընդդիմանում>> / Գործք 19,9/: Նրանք կառչած էին իրենց ավանդույթներին և այն լուրը, որ Հիսուսը Աստծո Որդին է, իսկ Պողոսն էլ Քրիստոսի առաքյալը, չէին ընդունում: Ես գիտեմ, որ Աստծո զավակների շարքը այստեղ՝ Բրազիլիայում երկրի և այս քաղաքի բնակիչների թվի հետ համեմատած՝ փոքր է: Դուք ձգտում եք ձեր հավատը տարածել, բայց շատ հավատարիմ քրիստոնաներ չեն ընդունում այս նոր լուրը: Նրանք կառչած են մնում իրենց հավատին և ավանդույթներին: Երբ դուք նրանց ասում եք, որ մենք կենդանի առաքյալներ ունենք և, որ Հիսուսը կրկին գալու է, և նա անդրշիրմյան աշխարհի հոգիներին փրկություն է առաջարկում, նրանք ասում են. << Ոչ, դա մեզ և մեր ավանդույթներին օտար է: Դա խորթ է մեզ համար: Մենք չենք կարող դրան հավատալ: Մենք մնում ենքմեր հավատքին հավատարիմ>>: Ես կարծում եմ, որ իմաստ չունի պնդելու: Դուք դա ավելի լավ գիտեք, քան՝ ես: Նրանք կառչած են իրենց հավատին, և այսպիսի տեսակետով ենք տանում մեր պայքարը: Պողոսի առաջին խնդիրն այն էր, որ միայն քչերն ընդունեցին նոր լուրը:

Երրորդ խնդիրը, որ Պողոսը Եփեսոսում ուներ, այն էր, որ նա խոչընդոտ էր հանդիսանում որոշ գործարար մարդկանց համար: Այնտեղ զբաղվում էին բուսաբանական արվեստով և Դիանա աստվածուհու տաճարի արծաթե արձանների առևտրով, որը մեծ շահույթ էր բերում: Արհեստավորները և նրանց մոտ աշխատողները հավաքում էին և ասում. << Մենք չենք կարող թույլ տալ, որ այս մարդու քարոզները մեր գործարքները վարկաբեկի>> , և նրաք ուզում էին նրան հալածել: Այսօր էլ մենք ճանաչում ենք այն ոգուն , որը միշտ փողի վրա է հիմվում: Շատերն ասում

են. << Մենք պետք է փող վաստակենք, որպեսզի ինչ- որ բան կուտակել կարողանանք: Գիտե±ք, մենք պետք է շատ աշխատենք մեր փողի համար: Մենք ժամանակ չունենք Աստծո համար>>: Մյուսների համար Ավետարանն անգամ վտանգ է հանդիսանում իրենց գործարքների համար, քանի որ նրանք մտածում են.<< Մենք չենք կարող Քրիստոսի Ավետարանով ապրել և գործարարությամբ զբաղվել. միայն ինձ չասեք, որ ես ազնիվ պետք է լինեմ; Այդ բաներից ինձ հանգիստ թողեք: Ես չեմ ուզում նման բաների հետ գործ ունենալ: Ես ուզում եմ փող վաստակել>>: Քրիստոսի Ավետարանը արգելք է հանդիսանում նրանց համար իրենց գործերում: Նրանք այն չեն ընդունում: Սա այն շրջապատն էր, որում Պողոսը պետք է գործեր:

Հիմնականում նա կարող էր ասել. << Եթե դա այսպես է, կարող եմ ես այն ամիջապես մոռանալ: Սա պարզապես դժվար է: Շատերն ուզում են իրենց հին ավանդույթները պահել և չեն ընդունում նոր լուրը: Մյուսները հետաքրքրվում են Հիսուս Քրիստոսով միայն այն բանի համար, որ խոստացվում է ավելի լավ կյանք: Իսկ մի մասն էլ հետաքրքրվում է միայն փող վաստակելու առումով>>: Երբ այդ ամենի շուրջն են մտածում, Պողոսի արձագանքն ավելի հետաքրքրիր է դառնում. << Քանի որ իմ առջև մի դուռ է բացվել եռանդորեն գործելու>>: Նա դրանում մեծ հնարավորություն է տեսնում, որպեսզի այնտեղ գործի: Նրա մեծ հավատը դա հնարավոր է դարձնում; Նա մտածում էր.<< Եթե Աստված ինձ արդեն այս քաղաքն է ուղարկել, ապա նրա համար, որ ուզում է, որ ես այստեղ գործեմ>>: Եղբայրներ և քույրեր, այդ նույնը վերաբերում է մեզ այստեղ և այսօր: Մենք արտակարգ հնարավորություն ունենք Տիրոջ գործի համար ինչ- որ բան անելու: Դա պետք է արվի ամենուր ամբողջ աշխարհում: Ինչպե±ս կարող եմ ես այդպես ասել, հավանաբար շատերը հիմա իրենց հարց կտան: Բացատրությունը շատ պարզ է, Տեր Հիսուսը դեռ չի եկել, որովհետև նրա գործը դեռ ավարտված չէ:

Նա առաքյալներին ուղարկել է երկիր, որպեսզի նրանք այստեղ գործեն: Երբ այդ գործն ավարտվի, նա կրկին կգա: Եվ, քանի որ նա դեռ չի եկել, դա նշաբակում է, որ դեռ անելու աշխատանք կա: Երկրի վրա առաքյալների գործունեությունը նշան է այն բանի, որ մենք դեռ հնարավորություն ունենք գործելու և Ավետարանը տեղեկացնելու;

Դեռ հնարավոր է, և դա նաև Աստծո կամքն է, որ մարդիկ Աստծո զավակներ դառնան: Ինչքան ժամանակ առաքյալները երկրի վրա գործեն, դա ադպես էլ կլինի: Եվ, քանի որ այստեղ՝ ձեր երկրում առաքյալներ են գործում, ես կարծում եմ և հավատում, որ դա նաև այստեղ՝ ձեր երկրում դեռ հնարավոր է:

Հիմա մենք տեսնում ենք, թե ինչպես Պողոսը դա կատարեց: Նախ նա չդադարեցրեց Հիսուս Քրիստոսի մասին խոսելը, իր հավատը ճանաչել տալը: Աստված դա է սպասում նաև մեզնից: Մենք պետք է ճանաչել տանք մեր հավատը: Իհարկե, չի նշանակում, որ մենք պետք է ծովափերով վազենք և այնտեղ մարդկանց պատմենք մեր հավատից: Ոչ մեկը մեզ չի լսի: Լավագույնս՝ նրանք կծիծաղեն մեզ վրա: Սակայն մեր առօրյա շրջապատում մենք պետք է ինքնըստինքյան այդ մասին խոսենք. օրինակ. << Գիտե±ս, ես հավատում եմ , որ Աստված ինձ օգնել է: Չէ± որ դու գիտես, որ նախորդ շաբաթ ես դժվարություններ ունեի: Ես գնացի եկեղեցի և ժամերգության ժամանակ ես ուժ ու մխիթարություն ստացա>>: Այդ դեպքում ոչ ոք չի ծիծաղի, եթե նրանք նկատեն.<< Այո, նախորդ շաբաթ դու տխուր էիր, իսկ հիմա դու ավելի լավ ես : << Իսկ ինչու± համար լավ, որովհետև մենք ներկա ենք եղել ժամերգության: Մենք կարող ենք ինքնըստինքյան հասկանալիորեն մեր հավատքային ապրումների մասին խոսել, դրանով մենք մի սերմ ցանած կլինենք: Մենք պետք է այնպես անենք, ինչպես Պողոսը: Նրա համար ինքնին հասկանալի էր իր հավատի, իր փորձի մասին խոսելը, և թե ինչպես է Տերը նրան օգնել:

Մենք պետք է ցույց տանք, որ Աստծո հետ ոչինչ անհնար չէ:

Պողոսն այլ բան էլ արեց: Աստված նրա միջոցով հնարավոր դարձրեց զարմանալի հրաշքներ / Գործք 19,11/: Մարդիկ ասում էին .<< Նա իրականացրեց հրաշք. նա պետք է, որ Աստծո մարդ լինի>>: Ես գիտեմ , որ մեզնից ոչ մեկը, նաև ես, չի կարող մարդկանց բուժել: Սակայն դա այն հրաշքի ձևը չէ, որ Աստված պահանջում է մեզնից: Հրաշքները, որ մենք կարող ենք անել, այնպիսի բաներ են , որ այլ մարդկանց համար անհնար է թվում: Այնպիսի արտակարգ երևույթներ, ինչպիսիք են խաղաղություն

և վստահություն սփռելը, անգամ, եթե մեր կյանքը փոթորկոտ է, Աստծուն շնորհակալ և հավատարիմ լինելը, անգամ, եթե մեր կյանքում ամեն ինչ ձախողվում է: Դրանք բաներ են, որ շատ մարդիկ չեն հասկանում և ասում են.<< Նա պետք է որ տխուր լիներ և կյանքի հատակն ընկներ, սական նա խաղաղություն և վստահություն է սփռում>>: Շատ մարդկանց համար դա հրաշք է: Եվ նման հրաշքեր կարող են Աստծո բոլոր զավակները կատարել:

Մի աշխարհում, որը միշտ ավելի է եսասեր դառնում, մենք ի վիճակի ենք մերձավորի ուրախությունն ու տառապանքը նրա հետ կիսելու:

Հրաշքներից մեկն էլ այն է, որ մենք հավատքի և սիրո մեջ միասնական ենք՝ չնայած մեծ տարբերություններին: Երբ մարդիկ նայում են մեր համայնքներին, զարմանում են.<< Նրանք բոլորն այնքան տարբեր են: Կան հարուստներ և աղքատներ, կրթվածներ և թերի ուսյալներ, սակայն նրանք բոլոր միասնական են: Ինչպես է դա նրանց հաջողվում>>: Հատկապես այսօր դա մի հրաշք է: Մարդիկ չեն հասկանում, թե մենք ինչպես ենք դրան հասնում: Տեսնու±մ եք, որ այսպես կարող ենք նաև մենք հրաշքներ գործել: Շատերի համար բացարձակ անսովոր է, երբ մենք ներում ենք մեկին, ով մեզ ցավ է պատճառել: Անգամ շատերը հավանաբար ասում են.<< Դու խենթ ես: Դա հնարավոր չէ: Նորմալ մարդը այդպես երբեք չի անի>>: Այդ դեպքում մենք պատասխանում ենք.<, Այո, դա անհնար է, բայց իմ Աստծո հետ ինձ համար ամեն ինչ հնարավոր է դառնում>>: Մենք պետք է ցույց տանք, որ Աստծո հետ ոչինչ անհնարին չկա: Հենց այդպես է արել Պողոսը:

Նա այլ բան էլ է արել: Նա երեք տարի եղել է Եփեսոսում և այնտեղ մարդկանց հետ կիսել է ուրախությունն ու տառապանքը: Նա ազամ լացել է նրանց հետ: Դա ևս մի հրաշալի ձև է մեր հավատը ճանաչել տալու և ուրախ լուրը տեղեկացնելու: Մի աշխարհում, որն անընդհատ եսասեր է դառնում, մենք ի վիճակի ենք ուրախությունն ու տառապանքը մեր մերձավորների հետ կիսելու: Երբ մենք տեսնում ենք, որ մյուսները տառապում են, փորձում մենք նրանց մխիթարել: Մենք փորձում ենք օգնել և նրանց երկարատև ուրախություն և խաղաղություն նվիրել: Պողոս առաքյալը դա արել է երեք տարի շարունակ: Եփեսոսի մարդկանց դա դուր էր եկել: Նրանք մտածում էին.<< Այս մարդը ոչ միայն տեսություն է քարոզում, այլ մեզ հետ է, և կիսում է մեր տառապանքն ու լացում մեզ հետ>>: Եվ հենց այսպես կարող ենք մենք մեր հավատը ճանաչել տալ, նրանով, որ մենք օգնենք ուրիշներին տառապանքի պահին, անգամ, եթե նրանք նորառաքելական չեն: Մեր աշխարհը կարիք ունի մարդկանց, ովքեր օգնում են ուրիշներին տառապանքը կրելիս:

Չորրորդ կետը, որով Պողոսը ուժեղ էր. Նա ավելի ուշ ինքն է ասել.<< Ես ապացուցել եմ, որ ես իմ սեփական հետաքրքրության համար չեմ գործել: Ինչ ես արել եմ, չեմ արել փողի կան փառքի համար>>: Եվ մարդիկ պետք է իմանան, որ մենք էլ ենք նմանապես գործում: Նրանք պետք է իմանան, որ մենք դրանով չենք հետաքրքրված, որ անդամների թիվը մեծացնենք կամ մեր եկեղեցու ընդունումը լավացնենք: Եվ դա, իրականում, մեր գլխավոր հետաքրքությունը չէ: Ինչը որ մենք ուզում ենք, դա Տիրոջ փառահեղությունն է, մերձավորների հետ սիրով վարվելը: Դա մեր միակ մոտիվացիան է: Որոշ մարդիկ կարծում են.<< Լավ, եթե ես շատերի հրավիրեմ և նրանք բոլորը եկեղեցու անդամներ դառնան, իմ հոգին էլ կփրկվի>>: Ճիշտ է± արդյոք այս մոտիվացիան: Ես կարծում եմ՝ ոչ, և այն էլ՝ երկու պատճառով. նախ, նման մարդիկ կարծում են, որ նրանք կարող են փրկություն ունենալ: Բայց մենք չենք կարող փրկություն ունենալ, եթե անգամ մեզ հաջողի մեր միջոցով հարյուր մարդ նորառաքելական դարձնել: Երկրորդ. Աստված պահանջում է, որ մենք մեր մերձավորներին սիրենք: Բայց, եթե իմ մոտիվացիան միայն նրանում կայանա, որ իմ սեփական փրկությանը հասնեմ, դա տեղի չի ունենա իմ մերձավորի հոգու

Քարոզը լրացրեցին շրջանային առաքյալ Ռյուդիգեր Կրաուսեն / Գերմանիա/ և առաքյալ Ռայնալդո Միլքցուկը / Բրազիլիա/:

հանդեպ սիրուց: Քրիստոսի ապագա հարսնացուն լի է սիրով Աստծո և մերձավորի հանդեպ: Ես սիրում եմ իմ մերձավորին: Այն, ինչ ես ունեմ, ուզում եմ նրա հետ կիսել: Ես բացարձակ համոզված եմ, որ մարդիկ դա կարող են զգալ: Նրանք զգում են: Շատերն ուզում են, որ ես ինչ- որ պատճառով իրենց եկեղեցին այցելեմ, իսկ այստեղ այս մարդիկ ուզում են, որ ես իրենց եկեղեցին գնամ, քանի որ ինձ Հիսուս Քրստոսի մասնիկն են նվիրում, նրանք ուզում են Աստծո օրհնանքը և փառահեղությունը ինձ հետ կիսել, նրանք սիրում են ինձ:

Ihr seht also, dass wir uns in einer ähnlichen Lage wie Paulus befinden. Und die Botschaft Դուք տեսնում եք, որ մենք նույն իրավիճակում ենք գտնվում, ինչ վիճակում որ ժամանակին Պողոսն էր: Այսօր երեկոյան Աստծո Ոգու ուրախ լուրն է. << Մի վիատվեք, հավատացեք կենդանի առաքյալների գործերին: Ինչքան երկար նրանք ակտիվ լինեն, հնարավոր է դեռ հոգիներ գտնել, որոնք փրկություն են փնտրում, այս և անդրշիրիմյան աշխարհում: Մենք պետք է մեր հավատի և հավատքային ապրումների մասին խոսենք և այն մասին, ինչը որ մենք ապրում ենք ժամերգության ժամանակ: Մենք պետք է հրաշքներ գործենք, բաներ, որ անհնար է թվում մյուսների կողմից, բայց և որոնք մենք ի վիճակի ենք անել: Մենք անգամ նեղության մեջ ենք ուրախ, մենք լիովին վստահում ենք, մենք կարողանում ենք ներել; Մենք կարող ենք մեզ զոհել, եթե ոչինչ չունենք: Չնայած բոլոր տարբերություններին՝մենք միասնական ենք; Աստծո հետ ոչինչ անհնար չէ: Եվ հետո, մենք պետք է մեր մերձավորի ուրախությունն ու տառապանքը կիսենք և նրան ցույց տանք, որ մեր սեփական շահերի համար չենք անում, այլ՝սիրուց ելնելով; Ամեն: .

Հիմնական մտքեր

Մեր առաջադրանքը մենք մոտիվացնում ենք մերձավորի հանդեպ սիրուց, չնայած փորձությանը՝ ճանաչել ենք տալիս մեր հավատը խոսքով և գործով: Պողոս առաքյալը մեզ համար օրինակ է:

- Պողոսը չի դադարեցրել իր հավատը ճանաչել տալը:
- Պողոսի միջոցով Աստված հրաշքներ է անում:
- Պողոսը կառողանում է մարդկաց հետ ուրախությունն ու տառապանքը կիսել:
- Պողոսն ուզում էր ոչ թե սեփական շահից, այլ՝ սիրուց ելենելով գործել:

Օտարին ատելու փոխարեն մերձավորին սիրել

Լուսանկար՝ Սմիլեուս - Fotolia.com

Օտարը քո մերձավորն է. Սա գլխավոր առաքյալ Ժան- Լյուք Շնայդերի անցած տարվա հիմնական ուղերձներից է: Սա նաև առաջադրանք է այս տարվա՝ ահաբեկչության և պատերազմի, փախստականների հոսքի և օտարատյացության այս ժամանակաշրջանի համար:

2015 թ. սկսվեց արյունալի մահափորձերով. Փարիզում հունվարի 7-ին իսլամական ծայրահեղականները 16 մարդու սպանեցին սատիրական թերթի խմբագրությունում և շուկայում: Իսկ նոյեմբերի 13-ին ահաբեկիչները շուրջ 130 մարդու սպանեցին Ֆրանսիայի մայրաքաղաքի տարբեր շրջաններում: Մտգահոգությամբ և ցավակցորեն է արձագանքել Նորառաքելական եկեղեցին:

Բռնություն ամբողջ աշխարհում

Եկեղեցու միջազգային ղեկավարներն ու շրջանային առաքյալները բարեխոսում են զոհերի և նրանց հարազատների համար: Եկեղեցու անդամները ամեն շաբաթ նմանատիպ դեպք են արձանագրում. <<ինչ-որ տեղ աշխարհում, և ամենուրեք սարսափելի է>>,-ասում է գլխավոր առաքյալ Շնայդերը՝ մատնանշելով Նիգերիան, Մալին, Քենիան, Աֆղանստանը և Սիրիան:

Թե այդ վայրի մարդկանց համար դա կոնկրետ ինչ է նշանակում, հաղորդում են nac.today-ի լուրերը. Արևելյան Քենիայի Բարինգո շրջանի ավելի քան 4500 հավատքի եղբայրներ և քույրեր քաղաքացիական պատերազմական վիճակից փախչում են: Նիգերիայում ժամերգություններ չեն լինում, քրիստոնեական եկեղեցիները հրդեհվում են:

Տուրք չտալ ատելությանը

Մխիթարության հետ միասին՝ գլխավոր առաքյալի ժամերգությունները թշնամական տրամադրված մարդկանց առաջարկում են շփում.<< Տիրոջ տանը ատելությունը տեղ չունի>>,- ասաց եկեղեցու ղեկավարը նոյեմբերին Ցվիքաուի ժամերգության ժամանակ: << Ես չեմ կարող եզրակացնել, որ բոլոր քրիստոնյաները վատն են, քանի որ որոշ քրիստոնյաներ ինչ-որ վատ բան են անում: Ես չեմ կարող բոլոր մուսուլմաններին ատել միայն այն բանի համար, որ որոշ իսլամիստներ սարսափելի բաներ են անում: Գլխավոր առաքյալը սևեռվում է մերձավորին սիրելու վրա. << Մերձավորը օտարն է, որը բոլորովին այլ է, ով այլ մշակույթ ունի, այլ հավատ, այլ էություն, այլ կարծիք, նա է քո մերձավորը>>,- պարզաբանեց նա հունվարին տեղի ունեցած Լյուքսեմբուրգի ժամերգության ժամանակ:

Մերձավորն է՝ ընկերը, օտարը, թշնամին

Ընկերը, օտարը, թշնամին- բոլորն էլ մերձավոր են: Իսկ ինչպես սիրել նրանց: Այս առումով գլխավոր առաքյալը հստակ ցուցումներ տվեց նոյեմբերին՝ Բուենոս Այրեսի ժամերգության ժամանակ. տալ ընկերոջն այն, ինչ սպասում ես նրանից, օտարի հետ կիսել, ինչ ունես, թշնամուն նույն փրկությունը կամենաս, ինչը՝ քեզ:

Մերձավորի հանդեպ այս սերը հավատքի եղբայրներն ու քույրերը տարբեր ձևով են ապրում ամբողջ աշխարհում. Փարիզի հյուսիսային մարզի երիտասարդները աղոթում են ինչպես զոհերի, այնպես էլ ահաբեկիչների համար: Հարավային Աֆրիկայում եպիսկոպոսը օտարի հանդեպ ատելությանը հակադարձեց տնային այցը: Իսկ Եվրոպայում բազմաթիվ համայնքներ օգնում են փախստականներին, ովքեր պատերազմական շրջաններից հիմնականում արտագաղթել են Գերմանիա:

Բարին անել և մյուսների հետ կիսել

Արևելյան Եվրոպայից, Հյուսիսային Աֆրիկայից և Մերձավոր Արևելքից հարյուր հազարավոր մարդիկ են փախել դեպի Եվրոպա: Այս ճակատագրերը սրտեր են հուզում: Այլ քրիստոնյաների, նախաձեռնողների և կազմակերպիչների հետ միասին նորառաքելական եղբայրներն ու քույրերը օգնում են փախստականներին՝մեղմելու նրանց կարիքները:

Պրակտիկ խորհուրդներով և ֆինանսական միջոցներով օժանդակում են նաև եվրոպական շրջանային առաքյալները.<< Բարին անել և ուրիշների հետ կիսել, չմոռանաք>>,- կոչ արեց գլխավոր առաքյալը Ռոթվայլում սեպտեմբերին անցկացրած ժամերգության ժամանակ՝մեջ բերելով եբրայեցիներին ուղղված խոսքը.<< Մի մոռացեք բարեգործությունը, դա պետք է անել մերձավորի հանդեպ մաքուր սիրուց ելնելով>>:

Եկեղեցուց ոչ միայն օգտվողներ լինել

2015-ի նոյեմբերի 22-ի կիրակի օրը գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը 500 եղբայրների ու քույրերի հետ տոնեց ժամերգություն Կամբոջայում, երբ ինը առաքյալ ուղարկվեց հանգստի և հինգ առաքյալ ձեռնադրվեց: Մայրաքաղաք Ֆնոմ Պենում նա ժամերգության ժամանակ քարոզեց Գործք առաքելոցից:

Լուսանկարում՝ ԱԱԵ Կանադա

,, Հիսուսի կողմից ուղարկված առաքյալները գործի անցան: Շուտով նրանք կրոնական վերնախավի դիմադրությանը հանդիպեցին>>,- ամփոփեց Շնայդերը 2000 տարի առաջ կատարվածը: Առաքյալները ճնշումներին չէին ենթարկվում: Նրանք խնդրում էին համայնքներին՝ աջակցելու իրենց աշխատանքին:

Ակտիվ մասնակցություն փրկության պլանին

Այսօր էլ առաքյալները ստիպված են պայքարել իրենց առաջադրանքի կատարման համար: Համայնքները նրանց օժանդակում են նրանով, որ աղոթում են նրանց համար, որ հավատացյալներին Ավետարանի կենդանի վկայությունը ներկայացնեն: << Աստծո զավակը իրավունք չունի գոհանալ նրանով, որ լինի եկեղեցու ուսումնասիրող կամ նրանից օգտվող, նա պետք է առաքյալների համագործակիցը լինի>>,- այսպես ասաց գլխավոր առաքյալ Շնայդերը: Համայնքի անդամները հաճախորդներ չեն, ովքեր եկեղեցի են գալիս, եթե ինչ-որ բանի կարիք ունեն, որ գնեն և նորից ետ գնան տուն: Աստծո զավակները ակտիվ մասնակցում են փրկության պլանին:

Առաքելական առաջադրանք՝ դժվարություններ և օգնություն

Այս ժամանակ համայնքները հավաքվում էին, գովաբանում Աստծուն և միասին աղոթում, որ առաքյալները իրենց առաքելությունն իրականացնել կարողանան: Զարմանալի էր, որ նրանք չէին աղոթում.<< Սիրելի Աստված, խնդրում եմ, օգնիր մեզ լուծելու այս խնդիրը, սպանիր մեր թշնամիներին>>: Ոչ, համայնքի անդամները Աստծուն աղոթում էին անհրաժեշտ ուժի համար՝ առաքելությունն իրականացնելու: Գլխավոր առաքյալը խնդրեց օժանդակության համար.<< Ամբողջ եկեղեցին հորդորվում է առաքյալներին օժանդակելու և նրանց օգնելու: Մենք կօժանդակենք առաքյալներին, եթե ժամերգությունների գանք, հավաքվենք և գովաբանենք Աստծուն, ամբողջ համայնքը միասին կաղոթի. սիրելի Աստված այս ծանր ժամանակ ինձ ուժ տուր, ուժեղացրու

քո ծառաներին և մեզ ուժ տուր, որ չնայած բոլոր դժվարություններին՝ կարողանանք իրականացնել մեր առաքելությունը: Այն ժամանակ Աստված պատասխանեց երկրաշարժով. դա նշան էր նրա ներկայության: Այսօր էլ է նա իր ներկայությունը ցույց տալիս հավատացյալների շրջանում՝ իր խոսքով և Սուրբ Ընթրիքի տոնակատարությամբ:

Եռանդուն և ուրախ Քրիստոսով

<< Մենք օգնում մենք այսօրվա առաքյալներին՝հետևելով առաջին քրիստոնյաներին>>,-ասաց գլխավոր առաքյալ Շնայդերը: Եկեղեցու միջազգային ղեկավարը նշեց 5 հատկանիշներ՝

Խոստովանելով. Մենք պետք Աստծո խոսքը սրտանց և ազատ տեղեկացնենք: Մենք կարող ենք Աստծո խոսքը մեր առօրյա կյանքում տեղեկացնել: Մենք չենք կարող ամեն ինչ անել, ամեն ինչ ասել>>:

Սիրելով. << Երբ մեր շրջապատի մարդիկ նայում են մեզ և ասում.նայիր այս մարդկանց, նրանք այնքան տարբեր են: Մի մասը աղքատ է,մի մասը՝հարուստ, որոշները՝երիտասարդ, մյուսները՝ ծեր,

որոշները՝կիրթ, մյուսները՝ոչ: Նրանք այնքան տարբեր են, բայց սիրում են միմյանց և միասնական են: Այդ պարագայում համանքը կվկայի առաքյալների գործունեությունը:

Ուրախ. Առաքյալները տեղեկացրին նրանց. Հիսուսը ձեզ համար է զոհաբերվել: Հիսուսը հարություն է առել: Նա հաղթել է սատանային և մահին: Նա նորից գալու է և դուք կարողանալու եք նրա թագավորությունը գնալու: Համայնքը ընդունում է այս լուրը և հավատում: Դրանում է Քրիստոսով ուրախությունը:

Հաստատակամ. Համայնքը ենթարկվում է փորձությունների: Աստծո զավակները պետք է հաղթահարեն դժվարությունները, փորձությունները: Նրանք դրանք չպետք է շահարկեն: Անգամ եթե տառապեն և պայքարեն, պետք է ապրեն Ավետարանի համաձայն:

Զոհաբերելով. Առաջին քրիստոնյաները գիտեին, որ առաքյալներն իրենց կարիքն ունեին, որպեսզի իրենց առաքելությունը իրականացնել կարողանային: Նրանք իրենց զոհաբերություններն էին բերում առաքյալներին, քանի որ առաքյալները դրա կարիքն ունեին՝ իրենց առաքելությունը իրականացնել կարողանալու համար: Նրանք գիտեին, որ առաքյալները նաև փողի կարիք ունեին: Այդպես է նաև այսօր…>>:

Հիմնական մտքեր

Գործք առաքելոց 4,31

<< Եվ մինչ նրանք աղոթքի մեջ էին, շարժվեց այն տեղը, ուր նրանք հավաքված էին: Ամենքը լցվեցին Սուրբ Հոգով ու համարձակությամբ Աստծու խոսքն էին խոսում>>:

Համայնքը աջակցում է առաքյալների աշխատանքին՝ Աստծուն երկրպագելով և միասնական աղոթքով; Աստծո յուրաքանչյուր զավակ կոչված է համագործակցելու առաքյալների հետ՝ խոստովանելով իր հավատը , եղբայրական սերը, Քրիստոսով ուրախությունը, կայունությունը և հավատարմությունը :

Եկեղեցական խորհուրդներ

Լուսանկարը՝ Օլիվեր Ադութենի

2015-ի սեպտեմբերին լույս տեսավ Նորառաքելական եկեղեցու դավանաբանությունը հարցերով և պատասխաններով: Շուրջ 750 հարցերից ու պատասխաններից /community/ քըմյունիթին առանձնացրել է մի քանի հարցեր և պատասխաններ: Այս հրատարակությունն անդրադարձել է եկեղեցական խորհուրդներին և մահից հետո կյանքին:

Որո±նք են եկեղեցական խորհուրդները:
Եկեղեցական խորհուրդները Աստծո ողորմածությանը հաղորդակցվելու հիմքերն են: Այս սուրբ արարողություններով, որոնք կատարվում են մարդկանց միջոցով, Աստված փրկություն է նվիրում դրանք ընդունողին:

Ինչի±ն են ծառայում այդ խորհուրդները:
Այդ խորհուրդները ծառայում են այն բանին, որ մարդը հասնի փրկության: Այդ խորհուրդներով մարդը Աստծո հետ միասնություն է կազմում և այդ միասնության մեջ մնում: Երեք խորհուրդների՝ Սուրբ ջրով մկրտության, Սուրբ Հոգով կնունքի և Սուրբ Ընթրիքի ընդունումը հնարավորություն է տալիս Քրիստոսի գալստյան պահին միավորվել Տիրոջը:

Ի±նչ է տեղի ունենում Սուրբ ջրով մկրտության միջոցով:
Սուրբ ջրով մկրտվելով՝մարդու հարաբերությունը Աստծո հետ հիմնովին փոխվում է: Քանի որ մկրտվածը աղամանկան մեղքից մաքրվում է, այլևս Աստծուց հեռու չի գտնվում: Նա ձեռք է բերում Աստծո մոտիկությունը: Նա դառնում է քրիստոնյա: Իր հավատի միջոցով և Քրիստոսին ճանաչելով՝ մկրտվածը պատկանում է Քրիստոսի եկեղեցուն:

Ի±նչ է ասել Քրիստոսը իր առաքյալներին մկրտության առումով:
Իր հարությունից հետո Հիսուսն իր առաքյալներին առաջադրանք տվեց.<< Գնացեք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով>>: / Մատթեոս 28,19/ Ուրեմն, մկրտությունը առաքյալներին տրված առաջադրանքն է: Այս առումով նոր կտակարանում հաճախ ,, մկրտության,, ներքո երկու արարողություն է հասկացվում՝ մկրտություն ջրով և Սուրբ Հոգով: / Գործք 8,14/ Սուրբ ջրով մկրտությունն ու Սուրբ Հոգով մկրտությունը սերտ կապված են միմյանց հետ:

Ո±վ կարող է ընդունել Սուրբ մկտությունը:
Յուրաքանչյուր մարդ կարող է ընդունել ջրով մկրտությունը: Նախապայմանն այն է, որ նա հավատա Հիսուս Քրիստոսին և նրա Ավետարանին:

Ինչու± կարող են երեխաներն էլ մկրտվել:
Հիսուսի խոսքը /.<< Թույլ տվեք այդ մանուկներին գալ ինձ մոտ և արգելք մի եղեք նրանց, որովհետև Աստծո արքայությունն այդպիսիներինն է>>: / Մարկոս 10,14/ մատնանշում է , որ երեխաներն էլ պետք է արժանանան Աստծո օրհնանքներին: Դրանց թվում են նաև խորհուրդները: Նոր կտակարանը վկայում է , որ ընտանիքի յուրայինները մկրտվում են Աստծուն հավատացած լինելու համար>>: / Գործք 16,33,34/ Յուրայիններին են պատկանում նաև երեխաները: Դրանից զարգացել է քրիստոնեական երեխաների մկրտության ավանդույթը: Ի դեպ,

երեխաների մկրտության ժամանակ լիազորված դաստիարակողը իր վրա է վերցնում երեխային Հիսուս Քրիստոսին հավատալը սովորեցնելը և Ավետարանի ուսմունքի համաձայն նրան դաստիարակելու պատասխանատվությունը :

Ընդունվու±մ է այլ եկեղեցական համայքներում իրականացված մկրտությունը:
Այո, Քրիստոսի եկեղեցու բոլոր ճյուղերում Սուրբ ջրով մկրտությունը հնարավոր է և ներգործուն: Ջրով մկրտությունն առաջին քայլն է լիակատար փրկության ճանապարհին: Ամեն տեղ, որտեղ տեղի է ունենում Սուրբ ջրով մկրտություն՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, վավերական է: Այսպիսով, եկեղեցու մկրտությունը ամբողջովին վստահելի է: Դրա հիմքում ընդհանուր առմամբ Աստծո փրկության կամքն է:

Որտեղի±ց է ծագել <<Սուրբ Ընթրիք> հասկացությունը:
<< Սուրբ Ընթրիք>> հասկացությունը մատնանշում է այն դրվագը, երբ Հիսուս Քրիստոսը այս խորհուրդը հիմեց. Իր խաչելության նախորդ երեկոյան նա իր առաքյալների հետ տոնում էր Զատիկը:

Ի±նչ է տեղի ունենում նշխարի կիսման ժամանակ:
Նշխարի կիսման ժամանակ Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը ներկա են դառնում, հացն ու գինին բաժանման միջոցով իրենց էության մեջ չեն փոխվում, դա նշանակում է, հացն ու գինին չեն կերպարանափոխվում: Հացն ու գինին ներկայացնում են Հիսուսի մարմինն ու արյունը: Այս իրողությունը բնորոշվում է որպես <<համանյութականացում>>: Սուրբ Ընթրիքի ժամանակ հացն ու գինին ոչ թե Հիսուսի մարմնի և արյան պատկերներ են կամ խորհրդանիշեր, այլն՝ դրանք կիսելուց հետո իսկապես ներկա են Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը:

Ներկա± է Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը Սուրբ Ընթրիքում:
Այո, Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը առկա է Սուրբ Ընթրիքի մեջ: Այս զոհաբերությունը, սակայն, չի կրկնվում, այլ՝ այն <<մեկընդմիշտ>> է կատարվել / Եբրայեցիներ 10,10,14/:

Ի±նչ ներգործություն ունի Սուրբ Ընթրիքը:
Սուրբ Ընթրիքը ներքին միասնություն է ստեղծում Հիսուս Քրիստոսի հետ: Տրվում է Աստծո Որդու էությունն ու ուժը: Սուրբ Ընթրիքի ճաշակումը ծառայում է հավատացյալների միասնությանը, քանի որ նրանք միասին զարգանում են Հիսուս Քրիստոսի էությամբ: Այսպես, Սուրբ Ընթրիքը կարևոր միջոց է Քրիստոսի գալստյանը նախապարաստվելու համար:

Ի±նչ է Սուրբ Հոգով Կնունքը:
Սուրբ Հոգով կնունքն այն խորհուրդն է , որով հավատացյալը առաքյալի ձեռադրմանբ և աղոթքով ընդունում են Սուրբ Հոգու շնորհները: Նա դառնում է Աստծո զավակ և ձեռք է բերում առաջնեկություն:

Ինչպե±ս է նվիրաբերվում Սուրբ Հոգով կնունքի խորհուրդը:
Սուրբ Հոգով կնունքի խորհուրդը նվիրաբերվում է առաքյալի միջոցով. մկրտվածին տրվում է Սուրբ Հոգու շնորհները Աստծո անունով՝ Հոր , Որդու և Սուրբ Հոգու: Այդ ընթացքում առաքյալը ձեռքերը դնում է մկրտվածի գլխին և աղոթում է:

Որո±նք են Սուրբ Հոգով կնունքի ազդեցությունները:
Սուրբ կնունքի ժամանակ մարդը լցվում է Սուրբ Հոգով: Աստված նրան նվիրում է իր էությունից մի մասնիկ, դրանով Աստծո ուժը, Աստծո կյանքը և Աստծո սերը նվիրվում է մարդուն.<< Աստծո սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, որը տրվեց մեզ>>: / Հռոմեաց, 5,5 / Կնքվածը Աստծո սեփականությունն է, Աստծո ոգին իր բնակարանն է գտնում նրա մեջ / Հռոմեաց. 8,9/: Մարդը արդեն դառնում է Աստծո զավակ, նա դառնում է առաջնեկ. Վերստին ծնվելու հետևանքով մարդը դառնում է Աստծո զավակ, իսկ հետագայում կունենա առաջնեկության: Որպես Աստոծո զավակ հավատացյալը դառնում է Աստծո ժառանգորդը և Քրիստոսի ժառանգակիցը: <<Երեխայական ոգին>>, որը Սուրբ կնունքով արարվում է մարդու մեջ, վստահելիորեն դիմում է Աստծուն ՝ որպես <<սիրելի հոր>>: Սուրբ Հոգին կնքվածին հնարավորություն է տալիս զարգանալու, աստվածային առաքինությունները զարգացնելու: Դրանք պատկերավոր ձևով բնութագրվում են որպես Սուրբ Հոգու պտուղներ: / Գաղատացիներին 5,22/

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասե 243,CH -8051 Ցյուրիխ, Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ հրատարակչություն Փբը, Ֆրանկֆուրթեր շթրասե , 233, 63263 Նոյ- Իզենբուրգ, Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Կյանքը մահից հետո

Կա± կյանքի շարունակություն մահից հետո:
Այո, մարդն ինչպես մարմնական, այնպես էլ հոգևոր էակ է, նա մարմնի, հոգու և ոգու միասնություն է: Մարդու մարմինը մահկանացու է, այն անցողիկ է: Այն հողածին է և նորից վերադառնալու է հողը / 1.Մովսես 3,19/: Դրան հակառակ, հոգին և ոգին մարմնական մահից հետո էլ շարունակում են ապրել, այսինքն՝ անմահ են: Մարդու անհատականությունը՝ էականը, ինչը նրան ձևավորում է, ինչը նա ապրել է, զգացել, հավատացել, մարմնական մահից հետո մնում է:

<< Աստված մարդուն ստեղծել է անեղծ լինելու համար և արարել է նրան ըստ իր բարերարության պատկերի>>: Իմաստություն Սողոմոնի 2,23

Ի±նչ է մահը:
Մարդու մարմնական մահվան և հոգևոր մահվան միջև տարբերություն կա: Մարմնական մահը նշանակում է երկրային կյանքի ավարտ: Երբ այն վրա է հասնում, հոգին և ոգին լքում են նրան: Հոգևոր մահը մարդուն բաժանում է Աստծուց: Այն մեղքի հետևանք է: Երբ Աստվածաշնչում << երկրորդ մահվան >> մասին է խոսվում / Հայտնություն 20,6, 21,8 /, նկատի է առնվում Աստծուց բաժանումը, որը պարզ կլինի Վերջին դատաստանի ժամանակ:

Վերջին դատաստան. << Քանի որ մեղքի վարձը մահն է, իսկ Աստծո շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով>>: Հռոմեացիներին 6,23

Ո±վ իշխանություն ունի մահի վրա:
Սուրբ երրորդություն Աստվածը Տերն է կյանքի և մահվան: Հիսուս Քրիստոսը իր հարությամբ հաղթեց մահին, դրանով նա հնարավոր դարձրեց մարդու մուտքը հավերժական կյանք. << ...Հիսուս Քրիստոսի երևալով. նա, որ կործանեց մահը և լուսավոր դարձրեց կյանքն ու անմահությունը Ավետարանի միջոցով>> / 2. Տիմոթեոսին 1,10 /

Ի±նչ նշանակություն ունի Հիսուս Քրիստոսի հարությունը:
Հիսուս Քրիստոսի հարությունը մեռյալների հարության հիմքն է : Քանի որ նա հարություն է առել, մեռյալներն էլ են հարություն առնելու << ոմանք հավիտենական կյանքի համար, և ոմանք հավիտենական նախատինքի ու ամոթի համար>> / Դանիել 12,2 /:

<< Արդ, մի խորհուրդ եմ հայտնում ձեզ. Բոլորս էլ

Լուսանկարը՝ Ֆրանկ Շուլցի

պիտի ննջենք, բայց ոչ թե իսկապես բոլորս, պիտի նորոգվենք հանկարծակի, մի ակնթարթում, վերջին փողի ժամանակ, քանզի փողը պիտի հնչի և մեռելները հարություն պիտի առնեն առանց ապականության, և մենք պիտի նորոգվենք>>: 1. Կորնթաց. 15, 51,52

Սուրբ գրքում կա±ն վկայակոչություններ մահից հետո կյանքի շարունակության վերաբերյալ:
Մահից հետո կյանքի շարունակության մասին հստակեցում կա Հին կտակարանում, Նոր կտակարանում այդ մասին բազմիցս վկայվում է, օրինակ Պետրոսի 1-ին թղթի 3. 19,20- ում այսպես է գրվում. << ... որով և նա / Հիսուս Քրիստոսը/ գնաց քարոզեց բանտում եղած այն հոգիներին, որոնք մի ժամանակ ապստամբել էին, երբ Աստծու հավատարմությունը երկարաձգվում էր նրանց համար մինչև Նոյի օրերը, երբ տապանն էր շինում: Այդ օրերին քչերը. այսինքն ութ հոգի փրկվեցին ջրից>>:

Որտե±ղ են գտնվում մարդիկ մարմնական մահից հետո:
Մարդու հոգին և ոգին, որոնք մահացել են, պատկանում են մահվան թագավորությանը: Դա մենք բնութագրում ենք որպես <<անդրշիրիմյան աշխարհ>>:

Կա± մեռյալների վերածնունդ:
Ոչ, երկրային կյանքի / վերածնունդի / կրկնման պատկերացումները, վերաբերվի մարդուն, կենդանուն կամ բույսին, հակառակ են աստվածաշնչյան պատմություններին և Ավետարանի բովանդակությանը: << Եվ ինչպես որ մարդկանց սահմանված է մեկ անգամ մեռնել>>: / Եբրայեցիներին 9,27 /

<< Վերածնունդ>> հասկացությամբ են բնութագրվում քրիստոնեական ուսմունքի հետ կապ չունեցող մարդու տարբեր պատկերով երկրային կյանքի կրկնման մասին պատկերացումները:

Կարո±ղ ենք կապ հաստատել մահացածների հետ:
Մահացածների մասին հիշելով և նրանց համար աղոթելով մենք կապվում ենք նրանց հետ: Մոգություններ կամ ոգեհարցում անելով նրանց հետ կապի մեջ մտնելը Աստված մերժում է և այն մեղք է համարվում. << ...ձեր մեջ թող չգտնվի այնպիսի մեկը, որը...մոգություններով զբաղվի կամ ոգեհարցությամբ զբաղվի, որովհետև, ով զբաղվում է այդպիսի բաներով, Տիրոջ համար պիղծ է նա>>: / Երկրորդ օրենք 18, 10-12/

Ինչպիսի±ն է հոգիների վիճակը անդրշիրմյան աշխարհում

Հոգիների վիճակը անդրշիրիմյան աշխարհում արտահայտվում է Աստուն մոտ կամ հեռու լինելով ; Մարդու հոգին մարմնական մահից հետո ոչ մի փոփոխություն չի կրում: Հավատն ու անհավատությունը, հաշտվողականությունն ու անհաշտվողականութունը, սերն ու ատելությունը բնորոշ են մարդուն ոչ միայն այս , այլ նաև անդրշիրիմյան աշխարհում: Այս վիճակի մասին Հիսուսն ասել է Հարուստի և աղքատ Ղազարոսի մասին առակում, երբ այնտեղ խոսվում էր պատսպարվածության և տանջանքի վայրերի մասին / Ղուկաս 16, 19-31/:Մահացածը կարողանում է իր վիճակը գիտակցել: Նրանք, ովքեր տառապանք են կրում, հույս ունեն օգնության:

Փոփոխելի± է հոգիների վիճակը անդրշիրիմյան աշխարհում:
Այո, Քրիստոսի զոհաբերությունից ի վեր անդրշիրիմյան աշխարհում հոգիների վիճակը փոփոխելի է դեպի լավը: Հիսուս Քրիստոսը իր մահից հետո մեռյալների թագավորություն գնաց և քարոզեց այնտեղ; Ավետարանի քարոզը փոփոխության հնարավորություն ստեղծեց նրա համար, ով այն հավատով է ընդունում: Ուրեմն, մարդու մահից հետո էլ կարելի է փրկության հասնել:

Ինչպե±ս է հնարավոր անդրշիրիմյան աշխարհում հոգիների փոփոխությունը:
Անդրշիրիմյան աշխարհի այն հոգիները, ովքեր երբեք Ավետարանի մասին չեն լսել, մեղքերի քավության չեն արժանացել, Սուրբ հաղորդություն չեն ստացել, գտնվում են Աստծուց հեռու իրավիճակում: Այս իրավիճակը կարելի է միայն Հիսուս Քրիստոսին և նրա զոհաբերությանը հավատալով, ինչպես նաևՍուրբ Հաղորդության ընդունումով հաղթահարել:

Կարո±ղ ենք մենք օգնողներ լինել մահացածի փրկությանը:
Այո, մենք կարող ենք չփրկված հոգիների համար բարեխոսներ լինել և Տիրոջը խնդրել՝ նրանց օգելու: Մենք կարող ենք նաև աղոթել, որ հոգիները հավատան Հիսուս Քրիստոսին և պատրաստ լինեն ընդունելու փրկությունը, որն Աստված ուզում է նրանց նվիրել: Քանի որ մահացածներն ու ողջերը Քրիստոսով մեկ միասնություն են կազմում, ինչպես այս աշխարհում, այնպես էլ այն աշխարհում նրանք Քրիստոսի գաղափարով կգործեն, այսինքն՝ կբարեխոսեն չփրկվածների համար; Սակայն փրկությունը կլինի միայն Հիսուս Քրիստոսով:

<< Այս աշխարհ>> հասկացությունը վերաբերում է ընդհանուր առմամբ բոլոր ոլորտներին, դեպքերին ու իրավիճակներին, որոնք գտնվում են նյութական աշխարհում:



Մեր թշնամիների հանդեպ / Ղուկաս 6,27–36 /

Այն բանից հետո, երբ Հիսուսը տասներկու աշակերտներին առաքյալներ դարձրեց, նա խոսեց շատ մարդկանց առաջ: Նա բացատրեց, թե նրանք ինչպես պետք է գործեն՝

<< Սիրեցեք ձեր թշնամիներին;
Ձեզ ատողներին բարություն արեք;
Օրհնեցեք ձեզ անիծողներին;
Ձեզ նեղողների համար աղոթեցեք:
Ով խփում է ձեր ծնոտին, նրան մյուսն էլ մոտեցրու:
Ով որ քեզնից քո բաճկոնը բռնի է վերցնում, նրան մի արգելիր, որ վերցնի շապիկդ էլ:
Ամեն մարդու, որ քեզնից ուզում է, տուր:
Երբ ինչ որ մեկը քեզնից վերցնի, ետ մի պահանջիր:
Ինչպես կամենում եք, որ անեն ձեզ մարդիկ, այնպես արեք և դուք նրանց:
Եթե դուք ձեզ սիրողներին սիրեք, որն է ձեր արած շնորհքը, որովհետև մեղավորներն էլ սիրում են իրենց սիրողներին:
Եթե ձեր բարերարներին

լավություն անեք, որն է ձեր արած շնորհը, որովհետև մեղավորներն էլ նույնն են անում:
Եթե փոխ եք տալիս նրանց, որոնցից ետ առնելու ակնկալություն ունեք, որն է ձեր արած շնորհը, որովհետև մեղավորներն էլ են փոխ տալիս մեղավորներին, որպեսզի նույն չափով ետ առնեն:
Բայց դուք սիրեցեք ձեր թշնամիներին և բարություն արեք ձեզ ատողներին ու փոխ տվեք նրան, ումից ետ առնելու ակնկալություն չունեք:
Եվ ձեր վարձը շատ կլինի, և դուք Բարձրյալի որդիները կլինեք, որովհետև նա բարեհաճ է չարերի և ապերախտների հանդեպ:
Գթասիրտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է>>:

Մեր թշնամիների հանդեպ պատվիրանը երկար քարոզի մի մասն է, որը Հիսուսն արել է շատ մարդկանց առաջ: Ըստ Ղուկասի Ավետարանի՝ քարոզը տեղի է ունեցել դաշտում և դրա համար էլ կոչվում է Դաշտի քարոզ: Այն նմանեցվում է Լեռան քարոզին՝ ըստ Մատթեոսի: Երկուսն էլ սկսվում են փառաբանումներով, թշնամիներին սիրելու պատվիրանով և ավարտվում են լսածը գործի վերածելու հորդորով:

Միրելյա Ֆոլրթունաթո

ԱՅՑ ՔՈԹՈՍԱՅԱՅԻՆ՝ ՆԱԴԻՈՒՄ / ՖԻՋԻԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ /

Մեր կղզում հաճախ կիրառվող բառը կոչվում է << Բուլա>>: Այն ֆիջիական բառ է, որը նշանակում է՝ ողջույն: << Նի սա բուլա վինակա>> նշանակում է՝ բարի գալուստ: Ուրեմն՝ սիրելի Մենք երեխաներ ենք-ի ընթերցողներ, նի սա բուլա վինակա Մաթանիթու Թու-Վակայի-կոյա Կո Վիթի՝ Ֆիջիի հանրապետություն: Արտասահմանցի այցելուները ժամանեցին Նադիի: Այն գտնվում է Վիթի Լեվու գլխավոր կղզու վրա:

Ես առաջին անգամ եմ թռչում, բայց ես ուզում եմ մի օր օդաչուհի դառնալ և ձգտում եմ իրականացնել իմ երազանքը: Ես սովորում եմ 7–րդ դասարանում, 12 տարեկան եմ: Իմ անունը Քոթոսայա է, ձախ կողմում իմ լավագույն ընկերուհի Կամարին է: Մենք սիրում ենք միասին երգել:

Մենք ուրախանում ենք, որ կոնֆիրմանտ դառնալուց հետո գնալու ենք երիտասարդական հանդիպումների: Ես հաճույքով եմ հաճախում կիրակնօրյա դպրոց և հպարտ եմ, որ երգում եմ մանկական երգչախմբում: Իմ մայր Կարալաինին երգում է մեր համայնքի երգչախմբում: Գլխավոր առաքյալ Վիլհելմ Լեբերը 2007-ին այցելեց Նաթալաու: Ինչպիսի մեծ օրհնանք:

Մենք ապրում ենք Նադիում, իմ մեծ

ծնողների տանը: Նրանք առաջին նորառաքելական քրիստոնյաներն են Ֆիջի կղզում: Իմ պապիկը շրջանային ավագ է: Ֆիջի կղզին բաղկացած է 300 կղզիներից, բայց միայն 1/3-ն է բնակեցված, և ոչ բոլոր կղզիներն ունեն համայնք:

Իմ սիրած ուտեստներն են Թափիոկան և Թարոն՝ ձկով կամ հավով: Այն համեղ է, երբ եփվում է թոնրի մեջ: Ուտելիքը բանանի տերևներով է փաթաթվում և տաք քարի վրա ժամերով եփվում: Երբեմն ձուկը ես եմ որսում :

Ես քույր ու եղբայր չունեմ, ունեմ շատ ընկերներ և տնային կենդանիներ: Օրինակ, մի շուն ունեմ՝ Հինգշաբթի անունով և 2 կով՝ Բաթիստան և

Բեթթի անուններով:

Իմ հայր Ալենիսան դաշտի աշխատող է: Ֆիջիացիների հիմնական սնունդն է շաքարեղեգը, բանանը և կոկոսյան արմավը: Դրանք խաղաղության աղավնու հետ միասին պատկերված են մեր երկրի դրոշի վրա: Գրեթե 100 տարի Ֆիջին բրիտանական գաղութ է եղել, դրա համար էլ դրոշի վերևի ձախ մասում երևում է բրիտանական դրոշը: Առաջին անգամ մեր դրոշը բարձրացվել է 1970-ի հոկտեմբերի 10-ին, այդ օրը Ֆիջին անկախացավ:

Փոստարկղ

Ի±ՆՉ ԵՔ ԿԱՐԾՈՒՄ, Ո±Վ Է ԹՇՄԱՆԻՆ:?

<< Թշնամին այն մարդն է, որը դիմացինի լավը չի ուզում: Թշմանի է նաև մթին միտքը, որը չեն կարողանում վանել կամ մեծ վախը, որը չեն կարողանում հաղթահարել>>:
Մելինա. 11 տարեկան, Օսթելսհայմից

<< Թշնամին նա է, ով դիմացինին սպառնում է դանակով>>:
Զինա , Առգսբուրգ-Լեխհաուզենից

<< Թշմանին նա է, ով ինձ համակարգիչ կամ գրպանի փող չի տալիս: Նա ամեն ինչ անում է, որ իմ ընկերներն ու ես մեզ վատ զգանք>>:
Անահսե,13 տարեկան, Մաուրիթիուսից

<< Դպրոցում ինչ-որ մեկը գնդակս գողացել է: Նա ինձ ցույց տվեց գնդակս, բայց ինձ չվերադարձրեց>>:
Ջոնաթան, 10 տարեկան, Մաուրիթիուսից

<< Նա է, ով ինձ չի սիրում, ում հետ ես ընդհանուր բան չունեմ, թշնամի է: Դպրոցում ես մի քանի թշնամի ունեմ, նրանք չար բաներ են անում իմ հանդեպ>>:
Անաստասիա, 10 տարեկան, Մաուրիթիուսից

Տեղեկացում

03.04.2016	Բուենոս Այրես (Արգենտինա)
04.04.2016	Բահիա Բլանկա (Արգենտինա)
06.04.2016	Պուկալպա (Պերու)
10.04.2106	Բոգոտա (Կոլումբիա)
29.04.2016	Փոինթե Նոիրե (Կոնգոյի ԴՀ)
30.04.2016	Փոինթե Նոիրե (Կոնգոյի ԴՀ)
05.05.2016	Լյորիախ (Գերմանիա)
08.05.2016	Ստոկհոլմ (Շվեդիա)
15.05.2016	Ֆրանկֆուրտ (Գերմանիա)
22.05.2016	Թամա-Տոկիո (Ճապոնիա)
29.05.2016	Թաեյոն (Կորեա)
12.06.2016	Մեթց-Գրիգի (Ֆրանսիա)
19.06.2016	Հաննովեր-Լիստ (Գերմանիա)
25.06.2016	Բալթի (Մոլոդովա)
26.06.2016	ՀՔիշնև (Մոլոդովա)

New Apostolic Church
International